epiu

N 1-01/160
<<02>> 07 2012թ.

ՀՀ բնապահպանության նախարարություն

Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ

Պետական հիմնարկ

Ա. Արմենակյան 129
ք. Երևան 0047
Հայաստանի Հանրապետություն

Ministry of Nature Protection of RA

Environmental project implementation unit

State agency

129 Armenakyan str.
Yerevan 0047
Republic of Armenia

Министерство охраны природы РА

Бюро по реализации экологических программ

Государственное учреждение

ул. А. Арменакяна 129
г. Ереван 0047
Республика Армения

Tel. 37410 651-631
Fax. 37410 650-089

info@cep.am

nrmprp@web.am

<<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>> ՀԿ-ին

Ի պատասխան Ձեր կողմից <<Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկին 20.06.2012 թ-ին հասցեագրված N 174-ի 2 հարցմանը ***(պետական հիմնարկ մուտք է եղել 22.06.2012թ.)***՝ հայտնում եմ, որ <<Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկը գործում է պետական բյուջեի միջոցների հաշվին, որտեղ պետական հիմնարկին հատկացվող տարեկան դրամական միջոցները պահպանման ծախսերի հետ միասին կազմում են մոտ 31 միլիոն ՀՀ դրամ:

<<Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի բոլոր աշխատողները (թվով 17 հոգի) 2011 թվականի ավարտին ստացել են միայն դրամական պարգևատրում պետական հիմնարկի աշխատողների հաստիքացուցակի համամասնությամբ՝ ընդհանուր 1994740 դրամի չափով:

Ինչ վերաբերվում է յուրաքանչյուր աշխատողին տրված պարգևատրմանը, հարկ եմ համարում Ձեր ուշադրությունը հրավիրել այն իրավական նորմի դրույթին, որը սահմանում է <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասը, ըստ որի. տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում:

<<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ն մասով սահմանվում են տեղեկատվության ազատության սահմանափակումները: Այս հոդվածի բովանդակությունից հստակ երևում է, որ տեղեկատվության տրամադրումը մերժվում է, եթե դա հանդիսանում է նաև մարդու անձնական և ընտանեկան գաղտնիք, ուստի պետական հիմնարկի աշխատողների պարգևատրման վերաբերյալ տեղեկատվությունը նույնպես համարվում է մարդու կամ քաղաքացու անձնական կյանքի բաղկացուցիչ մաս:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134 հոդվածի 1-ին կետ սահմանում է, որ աշխատողի անձնական տվյալները փոխանցելիս գործատուն պարտավոր է պահպանել հետևյալ պահանջները. աշխատողի անձնական տվյալները չհայտնել երրորդ անձանց՝ առանց աշխատողի գրավոր համաձայնության, իսկ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 199 հոդվածի համաձայն աշխատողի աշխատավարձի և աշխատանքի այլ պայմանների վերաբերյալ տվյալները տրամադրվում կամ հրապարակվում են միայն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում կամ աշխատողի համաձայնությամբ:

Քանի որ բացակայում է պետական հիմնարկի առանձին աշխատողների 2011 թվականին ստացած պարգևատրումների վերաբերյալ տեղեկությունները տրամադրելու օրենքով սահմանված համաձայնությունը, հետևաբար հարցման 2-րդ կետի վերաբերյալ տեղեկատվություն չեմ կարող տրամադրել:

Հարգանքով՝ **Վ. Մարտիրոսյան**